ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/85

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ
Մասնակից՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով բաց մրցույթ, տնտեսական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2901-2022 գրությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.02.2022թ.-ի թիվ 08-025 գրության հիման վրա, 18.02.2022թ.-ին «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.02.2022թ.-ին:

21.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/85 համարի ծածկագիրը:

03.03.2022թ.-ին և 18.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2022թ.-ին:

2. <u>«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 11.02.2022թ.-ի թիվ 08-025 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 03.11.2021թ. հայտարարել էր ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6 ծածկագրով տնտեսական ապրանքների գնման ընթացակարգ: Տվյալ ընթացակարգին մասնակցության հայտ էր ներկայացրել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն: 12.01.2022թ. կայացած նիստում ընկերությունը ճանաչվել է հաղթող մասնակից 37-րդ չափաբաժնով: Պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է տեղեկագրում 13.01.2022թ.: Պայմանագիր կնքելու առաջարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մասնակցին 25.01.2022թ.: Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները պատվիրատուին ներկայացնելու համար ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվել է 09.02.2022թ. (ներառյալ): Սահմանված

ժամկետում Ընկերությունը պայմանագիր չի կնքել և Պատվիրատուին չի ներկայացրել, հետևաբար զրկվել է այն կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջները, խնդրում ենք նախաձեռնել գործընթաց «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կից ներկայացնում ենք հրավերի, գնահատող հանձնաժողովի նիստերի համապատասխան արձանագրությունների, գրանցամատյանի, ընկերության հայտի և էլ. փոստից քաղվածքի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 15.03.2022թ.-ին ներկայացրած 08-050 գրությամբ հայտնել է նա հետևյալը.

«Ի պատասխան ՍՑ-ԼՕ-2022/85 ծածկագրով գործընթացի շրջանակներում <<Մեծ Ծիածան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած դիրքորոշման, հայտնում ենք հետևյալը

<<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի (այսուհետև՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

<<1. Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:>>

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն

<<3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:>>

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>>-ի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն.

<<եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում>>

Գնման ընթացակարգի Հրավերի 1-ին մասի 10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է հետևյալը.

<<10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:>>

Բոլոր վերոնշյալ դրույթները հստակ արտահայտում են այն իմաստը, որ Ընտրված մասնակիցը պետք է ծանուցումը ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնի, այլ ոչ թե ուղարկի համապատասխան փաստաթղթերը:

Ինչ վերաբերվում է <<ՀԱՅՓՈՍ>> ՓԲԸ-ի կողմից փաստաթղթերը ներկայացնելուն, ապա այո, դրանք ներկայացվել են բժշկական կենտրոնին 14.02.2022թ-ին, սակայն այդ ժամանակ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն Մասնակիցն արդեն զրկված է եղել Պայմանագիրը կնքելու իրավունքից, իսկ տվյալները սահմանված ժամկետում ներկայացված են եղել Լիազոր Մարմին, ուստի և Պատվիրատուն այլևս չի կատարել որևէ գործողություն այդ փաստաթղթերի հետ: Հետևաբար Մասնակցի այն պնդումը, որ Պատվիրատուն անտեսել է ներկայացված փաստաթղթերը և զրկել իրեն Օրենսդրությամբ երաշխավորված իրավունքից, տեղին չէ:»:

3. <u>«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.12.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2901-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 11.03.2022թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), ինչի արդյունքում Ընկերությունը 12.01.2022թ. կայացած նիստում ճանաչվել է հաղթող մասնակից 37-րդ չափաբաժնով:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է տեղեկագրում 13.01.2022թ.:

Պայմանագիր կնքելու առաջարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մասնակցին 25.01.2022թ. (վերջնաժամկետ՝ 09.03.2022թ.):

Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ այն է, մինչև նախատեսված 10 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվելը երկու օր առաջ, այն է՝ 08.02.2022թ.-ին, ժամը 11:11 (վերջնաժամկետը 09.02.2022թ. ներառյալ), սահմանված ձևով և ժամկետներում ուղարկել է պայմանագիրը, որակավորման և պայմանգրի կատարման ապահովումները /«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով/:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 1-ին կետի՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 12.01.2022թ. կայացած արտահերթ նիստին ճանաչվել էր հաղթող 37-րդ չափաբաժնով: Սահմանված ժամկետում Ընկերությունը պայմանագիր չի կնքել և չի ներկայացրել որակավորման և պայմանգրի կատարման ապահովումները: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների ընկերությունը զրկվում է պայամագիր կնքելու իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով ընթացակարգին, ինչի արդյունքում Ընկերությունը 12.01.2022թ. կայացած նիստում ճանաչվել է հաղթող մասնակից 37-րդ չափաբաժնով:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է տեղեկագրում 13.01.2022թ.:

Պայմանագիր կնքելու առաջարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մասնակցին 25.01.2022թ. (վերջնաժամկետ՝ 09.03.2022թ.ներառյալ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 1-ին կետի՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 12.01.2022թ. կայացած արտահերթ նիստին ճանաչվել էր հաղթող 37-րդ չափաբաժնով: Սահմանված ժամկետում Ընկերությունը պայմանագիր չի կնքել և չի ներկայացրել որակավորման և պայմանգրի կատարման ապահովումները: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների ընկերությունը զրկվում է պայամագիր կնքելու իրավունքից:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունանալ, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ այն է, մինչև

նախատեսված 10 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվելը երկու օր առաջ, այն է՝ 08.02.2022թ.-ին, ժամը 11:11 (վերջնաժամկետը 09.02.2022թ. ներառյալ), սահմանված ձևով և ժամկետներում ուղարկել է պայմանագիրը, որակավորման և պայմանգրի կատարման ապահովումները /«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով/: Ի հավաստումն վերոհիշյալի՝ կցվում է փոստային առաքման կտրոնը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ քանի որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Եսայանը ներկայումս փաստացի բնակվում է Կոտայքի մարզի գ. Գեղաշենում (Գեղաշենի համայնքապետարանի կողմից տրված 04.03.2022թ. համապատասխան տեղեկանքը կցվում է), ապա ստորագրված պայմանագիրը՝ կից որակավորման և պայմանգրի կատարման ապահովումներով, տնօրենի կողմից ուղարկվել է վերոհիշյալ Գեղաշենի հարևանությամբ գտնվող գ. Արամուսի «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի համապատասխան բաժանմունքից (գ. Գեղաշենում գտնվող փոստային բաժանմունքում իրականացվում էին վերանորոգման աշխատանքներ): Համապատասխան արտապումը՝ կատարված «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի կայքից, կցվում է (հղումը՝ https://www.haypost.am/am/track-trace#DLE0102203899AM):

Ըստ ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի կայքի արտապման՝ 08.02.2022թ. ուղարկված նամակը հասցեատիրոջը՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ին, հանձնվել է 14.02.2022թ.:

Հարգելի պարոն Օհանյան, կարծում ենք, որ եթե բողոքներ քննող անձի կողմից կատարվի համապատասխան հարցում՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ–ին, ապա վերջինս կհաստատի 14.02.2022թ. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ուղարկված ստորարգրված պայմանագիրը՝ կից որակավորման և պայմանգրի կատարման ապահովումներով, ստանալու փաստը:

Այսպիսով, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն մինչև վերջնաժամկետը լրանալը՝ 08.02.2022թ., "ՀԱՅՓՈՍ" ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը համապատասխան ապահովումներով, ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ապահովումներով ներկայացրել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն

սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնվածավ: Իսկ ինչպես արդեն նշել ենք, "Գնումների մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 03.11.2021թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

iii. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ միաժամանակ պարտավորվելով ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.01.2022թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ մրցույթի 37-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

v. 13.01.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն 25.01.2022թ.-ին Մասնակցի ciacanmarket@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի ապահովումների ներկայացման առաջարկը:

vii. Հանձնաժողովի 10.02.2022թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

viii. Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ 6254231, կոդը՝ DLE0102203899AM/ համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 08.02.2022թ.-ին պատվիրված նամակով «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ին (հասցե՝ ք. Երևան, Արմենակյան փ. 108/4) ուղարկել է առաքանի:

ix. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ 6254231, կոդը՝ DLE0102203899AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 14.02.2022թ.-ին, ժամը 12:38-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2901-2022 գրությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Տնտեսական ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, տնտեսական ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը,

քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 03.11.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 12.01.2022թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ մրցույթի 37-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված Պատվիրատուն 25.01.2022թ.-ին Մասնակցի ciacanmarket@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/6» ծածկագրով պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի ապահովումների ներկայացման առաջարկը, սակայն Հանձնաժողովի 10.02.2022թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ 6254231, կոդը՝ DLE0102203899AM/ համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 08.02.2022թ.-ին պատվիրված նամակով «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ին (հասցե՝ ք. Երևան, Արմենակյան փ. 108/4) ուղարկել է առաքանի: www.haypost.am կայքի ուսունասիրության

արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ 6254231, կոդը՝ DLE0102203899AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 14.02.2022թ.-ին, ժամը 12:38-ին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 25.01.2022թ.-ին, էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 08.02.2022թ.-ին, կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում ստանալով «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ուղարկված ապահովումները կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 08.02.2022թ.-ին, Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիրը և ապահովումները, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2901-2022 գրությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/85 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**